Առաջադրանք

1. Լսի՛ր տրված ձայնագրությունը։

Գրի՛ր թելադրություն։

Լուսանում է: Քամին քշում է մառախուղի խիտ ամպերը: Նրանց միջից բարձրանում են ժայռերի կատարները: Լեռան հետևից ելնում է արևը: Մամուռից պոկվում են անձրևի կաթիլները և ջինջ արցունքի նման շողշողում: Ժայռերը խոշոր են, սև և մռայլ: Ահա մեկը կատվի մռութով հենվել է մի ուրիշի վրա, որը նման է մի մեծ գորտի:

Նրանց մոտ մի ժայռ կարծես թեքվել է դուրս եկող արևի դեմ: Մի ուրիշը քարե արծվի է

նման, որն ուզում է լայն թևերը թափահարել ու չի կարողանում: Այս ամենը մեր գյուղի թիկունքում է, որի խոր ու քարքարոտ ձորերում բարակ առուն հոսում է հեղեղի նման:

2. Նորի՛ց կարդա տեքստը:
Կարդացի՞ր: Կեցցե՛ս:
Հիմա շարունակի՛ր՝ գրելով երեքից հինգ նախադասություն այնպես, որ ստանաս ամբողջական պատում:

Մի օր էլ այս ժայռերից մեկը ճաքում է և թափվում գետի մեջ: Մարդիկ նրան նմանեցնում են թռչունի, որը շատ վեհ է և

հպարտ: Նրա թևերը և կեցվածքը գեղեցիկ էին: Այդ թռչունը Արծիվն էր:

3. Ստուգի՛ր թելադրությունդ և շարադրությունդ:
4. Օգտվեցի՞ր առցանց բառարանից. գունավորի՛ր պատասխանդ.

- այո
- ոչ:

5. Եթե օգտվել ես առցանց բառարանից, գրի՛ր այն բառերը, որոնց գրությունը ստուգել ես:

Մամուռ, կատար: